ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 421 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-Ի N 201-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02569972) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխ-վարչապետի 2024 թվականի մարտի 25-ի «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Համայնքների զարգացում» ծրագրի մասին» N 201-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Արմդենտալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01286918) 2026 թվականի հունիսի 24-ին կնքված՝ N 72-2026 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ատամնաբուժական պարագաների ձեռքբերում՝ 609,980 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Մեգադենտալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01318299) 2026 թվականի հունիսի 24-ին կնքված՝ N 73-2026 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է

ատամնաբուժական պարագաների ձեռքբերում՝ 145,828 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Կասկադ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01013035) 2026 թվականի հունիսի 19-ին կնքված՝ N 74-2026 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Լոռու մարզի «ՔՈԱՖ Սմարթ» կենտրոնի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 72,578,970 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Յանեկյան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06978822) 2026 թվականի հունիսի 29-ին կնքված՝ N 75-2026 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Լոռու մարզի «ՔՈԱՖ Սմարթ» կենտրոնի դռների վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 2,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

13.07.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ